

ծր:» Իսկ դրա համար հարկաւոր է իր թէ լաւ և թէ վատ կողմերը անկողմնապահութեամբ խիստ և անխնայ կրիտիկային ենթարկել:

Այդ ճշմարտութիւնը մեր հասարակական կեանքի բոլոր երեւոյթների վերաբերութեամբ եղել է «Մշակի» համար իր ամբողջ գոյութեան ընթացքում մի հաստատ և անփոփոխ նշանաբան:

Նշանաբանին, որբան հրար կը լինի իրան, «Մշակը» հետեւելու է միշտ, հետեւելու է քանի որ գոյութիւն կունենայ...

Թող ուրիշի համար գոյութեան միակ պայմանը լինի շարժողութիւն ժողովրդի բոլոր վատ կրքերին, հնացած, փտած մտքերին, տգիտութեան հողի մէջ խոր արմատներ գցած տգեղ և խաւար գաղափարներին, անպէտք և փնտաւար, բայց ամբոխին սիրելի անժամանակակից աւանդութիւններին:

Մենք այս պայմանով մեզ համար գոյութիւն չենք ցանկանում:

Լաւ է բոլորովին գոյութիւն չունենանք բան թէ այս պայմանով ապրենք:

Մեզ համար հազար անգամ լաւ է, որ ժամանակակիցները մեզ առեն, քան թէ ապագայ սերունդները մեզ արհամարհեն:

Նաւոր նամակներով մի քանի ըողբներ,—ստացվեցան և շատ համակրական նամակներ: Մի քանի պարոններ մինչև անգամ խնդրում էին, որ յիշեալ աշխատութիւնը առանձին տետրակով հրատարակվի: Բայց այ. Գաղեանի նամակի մէջ իմ ուշադրութիւնը գրաւում է այն կէտը, իբր թէ, ես դուրս բերելով ուսանողութիւնը մի հրէշային պատկերի մէջ, դրանով անգիտակցաբար մտցնում եմ հակակրօնութիւն և մինչև անգամ թշնամութիւն հասարակութեան մէջ դէպի այն սերունդը, որի ուսերի վրա շատ և շատ յոյսեր է դրել ազգը: Թող չը վրդովվի պատուելի նամակագիրը, դրանով ուսանողութիւնը ամենին չի վնասվի: Կընսածա՛նաչութիւնը միշտ եղել է օգտուէտ և կը լինի: Յիմար կանուանէինք այն հիւանդին, որ թագրեւում է իր ցաւերը: Երբ «Մշակը» սկսեց անողորմ կերպով մտաւորականներին, գտնվեցան միամիտներ, որ ասում էին.—Պարոններ, ինչ էք չինում, դուք ձեռքով ձեռք տունը քանդում էք. եկեղեցին մեր ազգի հիւնքն է. յարձակվելով եկեղեցականների վրա, մերկայանալով նրանց այլ լանդակութիւնը, դուք դրանով կը ծնեցնէք հակակրօնութիւն և մինչև անգամ անհաշտութիւն ժողովրդի սրտում: և կը բաց անէք նրա ու եկեղեցականների մէջ մի անդունդ, որը յետոյ դժուար կը լինի միացնել.— և դրանով կը վնասվի մեր եկեղեցին: Բայց եկեղեցին ամենին չը վնասվեցաւ և եկեղեցականները սկսեցին փոքր առ փոքր լաւանալ:

Ում շատ է տուած, նրանից շատ կը պահանջվի: Եւ և մեղաւորից ամեն մէկը, ի հարկէ, այնքան խիստ չէինք լինի Ներսիսեան զարդոյտով կամ որ և ինչ միջնակարգ ուսումնարանում աւարտած աշակերտի հետ, որովհետեւ նա գործում է աւելի, քան թէ սովորել է: Բայց համալսարանական լսարձր ուսում ստացած երիտասարդին պէտք է մտորակել ամենայն անդիմութեամբ, երբ նա չէ համապատասխանում ոչ իր կոչմանը և ոչ ստացած գիտութեանը: Մեր լրագրութիւնը, մեր գրականութիւնը մեծ բարեբարութիւն արած կը լինի ազգին, երբ կը սկսի քննադատել այդ փչացած և խարխալած սերունդը, որ մի նշող անգամ օրինաւոր ապագայի չէ խոստանում: Ինչ են տուել մեզ, ինչ ծառայութիւն են մատուցել:

Հատ կարելի որ ապագայ սերունդների հայր, մի անգամ թերթերով «Մշակի» անցեալ համարները, կասի թէ «Մշակը» բոլորը չէ ասել, ինչ որ կարող էր և պէտք է ասել, կարելի է որ մեծ թերութիւններ կը գտնի մեր գրականների մէջ.—բայց մենք մի բանի մէջ հաւատացած ենք, այն է, որ ոչ ոք ամբողջ չի կարմիր մեր յօդուածները կարգաւոր և չի ասի յուզված և վրդոված զգացմունքով «Մի թէ կարող էին մի ժամանակ գոյութիւն ունենալ հասարակական կարծիքի իրանց առաջնորդ անուանող անձինք, որոնք գոյութեան իրաւունք ունենալու համար, մինչև այն աստիճան էին ստորանում, որ շողբորթում էին ժամանակակից տգիտութեան, խաւարասիրութեան և ամենահրէշաւոր նախապաշարմունքներին»:

Թող առեն մեզ ժամանակակիցները, կրկնում ենք դարձեալ, բայց աշխատենք և դենք մեզ համար նպատակ որ ապագայ սերունդները մեզ չարհամարհեն, և մեզ համար չը կարմրեն:

Եւ դա կը լինի մեր ամենամեծ մխիթարութիւն, մեր ամենամեծ վարձատրութիւն:

Թող այս բանի վրա լաւ միտած են նրանք, որոնք վստահա-

հանում ենք, որ անհաշտութիւնը, կեանքի մէջ բարձր դիրք բռնել, հարստանալ, փառաւոր կերպով ապրել,—այս բաներից հազիւ թէ հայոց ազգը կարող էր շահիլ:

Պէտք է ի նկատի ունենալ մի ուրիշ կէտ ևս: Մեր ուսանողները ամեն տեղ, ամեն երկրում, օտարազգիների հետ համեմատելով, ամենաչին փոքրամասնութիւն են կարծում: Նրանք, օրինակ, մի համալսարանում կային 10 նա ուսանողներ, իսկ 100 ուսուցիչներ, և հայերից 8-ը մտն էին, իսկ ուսանողներից 50-ը, դարձեալ համեմատաբար հայերից վատերի թիւը մեծ պրօցէնտ է ներկայացնում: Բայց մեր նախնի ուսանողները այսպէս չէին, նրանք Աթէնքի, Ալէքսանդրիայի դպրոցներում միշտ իրանց փոքրամասնութեամբ գերազանցում էին միտաւորութիւնից, որպէս լաւ ուսանողներ:

Պ. Գաղեանի մի երկրորդ սխալն այն է, որ նա աշխատում է երկրորդը արդարացի պատճառներով: Պատճառները միայն թեթեւացում են յանցանքը, բայց հազիւ թէ արդարացում են: Մի անբարեբաղիւն, միշտ կը համարվի անբարեբաղիւն, թէ նա մոլորութիւնները առաջ է կանգնել վատ դատարարականութիւնից կամ կենսական ալ և այլ պահանջներից: Այսպէս էլ գողը, աւաղակը միշտ ճանաչվում է աւաղակ, թէ և նրանց վարձուները լինէր հետեւանք տնտեսական կամ հասարակական այս և այն անկարգ կազմակերպութեան: Գողութիւնը փաստ է, պատճառով չեն արդարացում նրան:

Հասկացողութեան այդ եղանակը, երբ միակողմանի կերպով է վերաբերվում դէպի յայտնվող երևոյթները, միշտ սխալ եղանակացութիւնների է հանցում: Ի հարկէ, ամեն երևոյթ ունի իր արտադրիչ պատճառները: Որպէս բնութեան, նոյն պէս և կենքի մէջ ոչինչ բան չի ծնւնալով չէ: Բայց պատճառները պէտք է խառնել երեւոյթների հետ, որոնք միշտ պահպանում են իրանց բնաւորութիւնը, լաւ կամ վատ յատկութիւնները:

Եթէ այս մեթօդին հետեւէինք, այն ժամանակ ոչ մի բանի դէմ պէտք չէր խօսել, ոչ մի անարդարութեան դէմ պէտք չէր բողոքել, որովհետեւ և ոչ մէկը առանց արտադրիչ պատճառի չէր լինե-

նում են առաջնորդել հասարակական կարծիքը:

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՍՏԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Թիֆլիս, 20 դեկտեմբերի

Մի սղարն հայ վաճառական, որ կամենում է իր անունը փառաբանել հասարակութեան մէջ և իրան կոչում է ազգաւոր, բայց այդպիսի դատարկ և չողորմ պարոն, ոչ թէ ազգաւոր է, այլ ազգին խաւար: Երբեք ամիս սրանից առաջ պարոնը դիմեց ինձ մէկ թղթով որ ստորագրեմ յօդուած «Արարատեան» ընկերութեան: Ես ընդունելով պարոնի պատուէրը ստորագրեցի հինգ բուրբ, բացի ինձանից՝ եօթը անձանց էլ խնդրեցի նոքա ստորագրեցան ամեն մէկը հինգական բուրբ, այնպէս որ մի 3/4 ժամկէտ մէջ ժողովեցաւ քառասուն բուրբ: Բայց մինչև օրս ինչ եղաւ այդ փողը, այդ Աստուծուն է յայտնի: Ուստի իմ համբերութիւնս հասնելով կը խնդրեմ պարոնից, որ չուտով այդ փողը հասցնի ըստ պատկանելոյն «Մշակի» խմբագրութեանը, ինչ որ նա ստիպված միտ անգամ կը յայտնեմ պարոնի և բոլոր նուիրատուների ազգանունները, այնուհետեւ կը մերկայանեմ պարոնի պատիւը և կը սեպեմ երեսը: Իսկ ձեռնից, պարոն խմբագիր, խոնարհաբար խնդրեմ քառասուն բուրբ ստանալուց յետոյ բարեհաճէք յայտնել ձեր լրագրի միջոցով:

Աղաւթ Մեղիւ-Ավագեան

Լուս: Բայց մեր մէջ կան շատերը, որոնք հետեւում են մտածութեան այս եղանակին: Օրինակ, ասում են, թէ հայը ցած և ստրկական բնաւորութիւն ունի, թէ նա դուրի է այն բանից, որ կոչվում է ազգային ազնիւ հպարտութիւն, թէ նա պատուի և անձնասիրութեան զգացմունք չունի, թէ նա չէ հետաքրքրվում որ և ինչ բարձր իդէալով և այլն: Յիմար անձնագրիները հերքում են այս ճշմարտութիւնները, իսկ կարճատես խելացիները արդարացում են: Վերջիններս սկսում են քննել պատճառները, և իսկոյն դառնալով դէպի անցեալը, դէպի պատմութիւնը, պատմականում են քննել.—Գու գիտեմ, եղբայր, թէ այդ ազգը ինչ է կրել իր կեանքում, թշնամու սուրբ միշտ նրա զինից պակաս չէ եղել. բռնութեան ընդհանուր անցեալն են իր զգացմունքը դէպի գեղեցիկը և ազնիւը.—Հաստ լաւ, պատճառը հասկայանք, դիցուք թէ հայը մի այսպիսի թշուառ անցեալ է ունեցել, բայց ներկայումս պէտք չէ, որ ուղղվի և վերադարձնէ իր հին կրօնաւոր:

Ասան դու նրանք, հայոց բնականորէն այս և այն թերութիւնն ունի, թէ նրա կարգաւորութեան մէջ տիրում են շատ անկարգութիւններ, թէ մանուկ սերունդը ճշգրտում է հերկից, թէ ամուսնական լծակցութիւնը շատ անգամ անտանելի է դառնում և այլն: Քեզ կը պատասխանեն.—Թէ դրանք մտել են մեր մէջ երկար տարիներով պարսիկների և մահմեդական ազգերի հետ դրացութիւնից:—Կարձեալ պատճառներ: Բայց դրանք բաւական չեն, որ մենք ներողամիտ լինէինք դէպի մեր ընտանեկան մարդութիւնները: Ի՞նչ կասէինք այն բժշկին, որ հիւանդի ցաւը քննելով, կասէր մեզ, թէ դա մի փնտաւար տենդ է, որ առաջ է եկել միսնուց, և կը դադարէր նրան դարմանելուց: Միտը պատճառ է, բայց տենդը հիւանդութեան փաստ է, որ կարող է բժշկութեան:

Վերջացնում եմ ձեզ հետ, պ. Գաղեան, հասկանում եմ ուսանողի վրդովմունքը, երբ յարձակվում են նրա ընկերակիցների վրա: Զաւում եմ, որ աւելի պարզ խօսել չէի կարող, և այս պատճառով իմ յօդուածը ստացաւ աւելի այլաբանական և ճիշտ ասած, ֆելետոնական ձև: Բայց եթէ ես իմ կարծիքների մէջ ուսանողների վերաբե-

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Երկուշաբթի դիւերը, դեկտեմբերի 24-ին կրակ յայտնվեցաւ Թիֆլիսի Սինի փողոցի վրա գըտնվող Անանիոսի քարվանսարայում: Հրատուկ կրակը պատեց խանութների ամբողջ շարքը: Հրդեհը մինչև առաւօտը սարսափելի դարձաւ: Մեծ վտանգ կար դիմաց գտնվող տներին՝ Լօրիս-Մեղրովի տանը և Արծրունու քարվանսարային: Այրվում էին մանաւանդ մոտի պահեստները: Բայց բարդաւորապէս բոլոր մօտակայ տները ազատվեցան վտանգից: Կրակը չարունակվում էր գրեթէ ամբողջ հետեւալ օրը:

Ռուսաց պաշտօնական «Правит. Вѣстн.» լրագիրը նորերումս հրատարակեց 1878 թ.ի պետական բեղմնագիր: Ռուսաստանի թշնամիները սպասում էին տեսնել բեղմնագիր մէջ խոշոր ապագիներ, բայց սաստիկ սխալվեցան, որովհետեւ 1878 թ.ի պետական բեղմնագիրը ներկայացնում է, ընդհակառակը, արդիւնքի աւելորդը, որ գոյացել է, մաքսատների և խմբիքների վերցվող ակցիդի հարկերից:

Այս օրերս հասել է Թիֆլիս և տալու է այսօր, դեկտեմբերի 26-ին, իրջաւալին կոնցերտը Կրուժոկի դահլիճում՝ միօրոյնչէի վրա ածող պ. Արվէդ Պօրտեն: Պարոնի հետ մասնակցելու է կոնցերտներում և մի երգչուհի, տ. Ֆրիդերիկ:

ՆՈՐ-ԲԱՅԱՆԻԹԻՅ մեզ գրում են, որ «Մշակի» տեղացի բաժանորդները անբաւական են չմեր լրագրից, որովհետեւ մենք այդ քաղաքից թղթակցութիւններ չենք սպում: Հաստ ցաւում ենք, որ Նոր-Բայազէթից մեզ ոչ ոք չէ թղթակցում: Տարվա ընթացքում մի կամ երկու նամակ ենք ստանում, որոնցից մի լուր անգամ չենք կարողանում քաղել:

Կիրակի, դեկտեմբերի 30-ին պ. Սեդրակ Մանդինեան կը կարդայ Արծրունու թատրոնում մի

րուբիանի սխալված եմ,—երանի թէ այդպէս լինէր....

Պատմութեան վրա խօսք գալով, ես չեմ կարող չը յիշել, որ վերջին ժամանակներում մեր պարբերական հրատարակութիւնների մէջ կրկին սկսեցին հունցել միանգամ մուսուլման երկպառակութեան խոսքը, —կրկին բարձրացրին կրօնի և ազգութեան խնդիրը: Խոստանալով առաջիկայ տարվա սկզբներում նուիրել այդ հարցին մի քանի պատմական յօդուածներ, այժմ բաւականանում եմ միայն մասնաւոր նկատողութիւններով:

Տաճկաստանի հայոց մամուլը երկար տարիներ զբաղեցաւ յիշեալ հարցով, և բազի թշնամութիւն սերմանելուց, բացի ազգային ամբողջութեան պատառուածքի ձեղքերը աւելի լայնացնելուց, ոչ մի օգտուէտ հետեւանք չը հասաւ: Եւ այսօր, երբ աւելի կարեւոր խնդիրների մասին խորհելը ունենք, երբ Տաճկաստանի հայերի վերածննդութեան հարցը դրաւում է մեր ամենի ուշադրութիւնը.—մեր մէջ գտնվում են մարդիկ, որ սկսում են կրկին բըժնել մարած մոխիրը, սկսում են կրկին բոլորքը դադարած վիճաբանութիւնների կրակը, յայտնելով այն հնացած, և լուսաւոր ազգերի համար իր նշանակութիւնը կորցրած միտքը, թէ կրօնը՝ այսինքն և կ և դ և ց ր ր պէտք է ճանաչել ազգութեան հիւնք, և ով որ դուրս է գալիս այդ եկեղեցուց, նա կտրվում է ազգի ամբողջութեան հետ անդամակցութիւնից և այլն: Արդարեւ, մի հին և բոլորովին մաշված գաղափար, որ դարերի ընթացքում, Վատիկանի դարբնոցի մէջ պապերի հօր կուանի տակ ծնվեցաւ, կովիցեալ և դարձեալ չը կարողացաւ եկեղեցու մէջ ի մի ձուլել ազգութիւնները:

Իսկ այժմ մի քանի ողորմելի դրէկներ աշխատում են նոյն իրագործել, ինչ որ Հռօմի անդրազուրկ չը կարողացաւ կատարել:

Մենք պատմութիւն ունենք, ասում են մեզ.—մեր պատմութիւնը սովորեցնում է, որ Ղուսաւորական եկեղեցին պէտք է լինի հայի պատասխանը և ազգութեան հիւնք, այդ եկեղեցուց դուրս հայը չէ կարող հայ համարվել, նա կորած է: Եւ այդ

դասախօսութիւն «Հայաստանի ճանապարհորդութեան տարւորութիւնները: Տոմարները վաղորդ ստանալ ցանկացողները պէտք է առնեն կենտրոնական գրասենյակից, իսկ ղեկավարները 30-ին, դասախօսութեան կարգալու օրը, Արմաշի թաղաքի կառավարման ճեղքի գնորդ տնօրէնին կողմէն կը լինեն: Մանրամասները առանձին փոխարկով կը յայտնուին:

ԵՐԵՎԱՆԻՑ մեզ հաղորդում են, որ օրերումս թէ քաղաքում և թէ շրջակայ դաշտերի մէջ մեծ ձիւն է եկել: Ձիւնը կէս արշին բարձրութեամբ ծածկել է դաշտերը: Գիւղացիք հանգստացել են ի նկատի ունենալով, որ լաւ հունձ կունենան: Առաւօտները, երբ քաղաքի բնակիչները անցնում են փողոցով, կտուրներէջ ձիւնը մաքրող մշակները նրանց վրա կոյտնորով ձիւն են անում:

Մեզ հաղորդում են ԵԱՄԱԹԱԽԻՑ, որ տեղական երկրաստորութիւնը մեծ մասամբ ազատ ժամանակները թղթախաղով է անցկացնում, մինչդեռ տեղական ընթերցարանի համար չեն կամենում հոգալ: Երբ երկրաստորութիւնը օր և է պաշտօն է յանձնում ընթերցարանի մէջ վարելու համար, նոքա միշտ հրաժարւում են:

Մեզ հաղորդում են ԶԱՔԱԹԱԽԻՑ, որ տեղական դպրոցներին օրերումս այցելել են դիրեկտոր Ստրելնիցին և թեմական տեսուչ պ. Գ. Բարխուդարեանը: Երկուսն էլ ուսումնարանի դրութիւնից դուրս են մնացել: 1877 և 1878 թուականներին ուսումնարանը ունեցել է 1366 ը. 55 կ. մուտք և 1045 ը. 24 կ. ծախս:

ՄԵԱԿԻ ԶԵՆԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԵՐ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 20 դեկտեմբեր: Մեծ Իշխան Նիկոլայ Ալեքսանդրովիչ նշանակւում է Վոյնսկան գնդի շէֆ:

Հիման վրա, կաթօլիկ և բողոքական հայերը հայ չեն, նրանք, ով դիտէ, թէ ինչ են... Եւ այդ տիրապետական քարոզները մեզ կարողում են այն պարսկական, որոնք ցարճեանի և Բերքեբեանի դասադրերից մի քանի գլուխներ սերտելով, երևակայում են, թէ պատմութիւն գիտեն: Մենք այսպիսիներին խորհուրդ կը տայինք մի փոքր ուսումնասիրել Բօկլը, եթէ կամենում էին հասկանալ, թէ ինչ կայ կայ ազգերի պատմութեան մէջ:

Պէտք է լայն հայեացքով նայել առարկայի վրա. պատմութիւնը առաջը միբաժնէր ունի որոնք երբեմն ձգում են անհմուտ նայողին օպտիկական խաբէյութիւնների մէջ: Եւդ, միակողմանի հայեացքը պատմութեան վրա միշտ մոլորեցնում է մարդուն: Հայը աշխարհի ստեղծագործութեան մէջ մի առանձին արարած չէ, և չէ կարող լինել: Դա ազգերի պատմութեան մէջ բացառութիւն չէ կարող կազմել: Դա ենթադրւած է եղել և պէտք է ենթադրվի մի և նոյն պատմական օրէնքն է ընդհանուր մարդկութիւնը ներկայացնող ազգերը: Հայը առանձին պատմական օրէնքներ ստեղծել չէ կարող: Պատմութիւնը ազգերի առջև մի որոշ շաղկէ է դնել—դա ընդհանուր մարդկութեան ուղին է,—ինչ ազգ, որ ոտքը դուրս է դնում այն շաղկէ, մարդկութեան է, կորչում է և ոչ չընկնում է...:

Կրօնը, որպէս մարդկային գգաբանութիւն արտայայտութիւն, ժամանակների հետ միշտ փոփոխվել է անվերջ կերպով կը փոփոխվի: Մեր նախնիքը մի ժամանակ կրօնապաշտ էին, այժմ մենք քրիստոնեայ ենք, իսկ դարերից յետոյ, ով դիտէ, մեր ապագայ սերունդը ինչ կրօն կը ստեղծէ իր համար, գուցէ ամենին կրօն էլ չի ունենայ: Ուրեմն, մի բան, որ տեղական չէ, որ միշտ յեղեղուկ վիճակի մէջ է գտնվում, որ զգացմունքից միայն կախում ունի, նա չէ կարող ազգութեան հաստատ հիմք լինել: Գուցէ մասնատրուպէս կը նպաստէ նրա գոյութեանը, բայց պահպանել չէ կարող:

Պէտք է փայտից չինած գլուխ ունենալ և այդ ամենապարզ ճշմարտութիւնները չը հասկանալ: Բայց ինչ օգուտ, հազար ու մէկ փաստեր ընդ, մի և նոյն է, դարձեալ թեղ կը պատասխանեն,

Կ. ՊՈԼԻՍ, 21 դեկտեմբեր: «Standart» լրագրի մէջ հաղորդւած լուրը, իբր թէ Պրիդ-րէնդի մէջ ապստամբութիւն յայտնվեցաւ և իբր թէ երկու եկեղեցի և բրիտանականներ մի քանի տներ այրվեցան և կողոպուեցան, ստորջ չէ:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբեր: Պետական բանկի 50% տոմսերը առաջին շրջանի արժէ 92 ը. 50 կ., երկրորդ 92 ը. 25 կ., երրորդ 92 ը. 50 կ., չորրորդ 92 ը. 25 կ., ներքին առաջին 50% փոխառութեան տոմսերը արժէ 231 ը. 75 կ., երկրորդ 226 ը. 50 կ., արևելեան առաջին 90 ը. 25 կ., երկրորդ 90 ը. 25 կ.: Ոսկի 7 ը. 81 կ.: Ռուսաց 1 ռուբլ Լօնդոնի վրա արժէ 25³/₁₆ պէնս, ռուսաց 100 ռուբլ Բերլինի վրա 213 մարկ, 75 պֆ. Փարիզի վրա 265 Ֆրանկ, 50 անտիմ: Բօրսայի տրամադրութիւնը ամուր է:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբեր: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետեւեալը. «Վանս, 19 դեկտեմբեր: Վայսրուհին երեկոյայ օրը զոհացուցիչ կերպով անցկացրեց, Խորհրդով ճաշեց, զինքը սրտի բաբախման և հազի պատճառով փոքր ինչ աւելի անհանգիստ քնեց. այսօր առաւօտ իրան փոքր ինչ թոյլ է գգում: Ջերմութեան աստիճանը երէկ երեկոյան 37,9 էր, իսկ երակի զարկ 100. այսօր առաւօտ Ջերմութեան աստիճանը 37,6 է. իսկ երակի զարկը 112: Ստորագրեցին բժշկապետներ Սլշէվսկի և Բօտկին:»

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբեր: Լուր է տարածված, որ իբր միևիտար Վալուէզ հանգուցեալ Իգնատիէվի փոխարէն միևիտարների մասնաժողովի նախագահ է նշանակված: Իշխան Լիվէն պետական կալուածների մինիստր է նշանակվել:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբեր: «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է հետեւեալը. «Վանս, 20 դեկտեմբեր: Վայսրուհու առողջութեան դրութեան մէջ վերջին օր-

թէ հայոց ազգը պահպանվեցաւ իր կրօնով, իր եկեղեցիով: Եւ այդ խօսքերը կրկնվում են մի հոյակապ ազգի վերաբերութեամբ, որի ողորմելի փրկանքներն են մնացել այսօր: Գուք դիտէք, պարոններ, թէ որքան էր առաջ հայերի թիւը, և այժմ որքան է մնացել: Ի՞նչու կորան նրանք, ի՞նչու կրօնը չը կարողացաւ պահպանել: Եթէ հայերը ունեցել են մի փառաւոր անցեալ,—դա եղել է նրա հեթանոսական դարերում: Քրիստոնէութիւնը ընդունելուց յետոյ այդ ազգը սկսեց տկարանալ և քայքայվել:

Շատ հեշտ է վեր առնել պատմութիւնից մի քանի երեւոյթներ, և առանց նրանց իսկական պատճառները քննելու, սխալ եզրակացութիւններ դուրս բերել: Շատ հեշտ է մատի փաթեման չինել Լեհաստանի հայ գաղթականութիւնը, ասելով, թէ Լեհաստանը փոխելու պատճառով կորան, ոչնչացան: Բայց պէտք է բարոյութիւն կոյր լինել և չը նկատել մի պատմութեան մէջ այն ընդհանուր երեւոյթը, որ դէպի արևմուտք դիմող բոլոր հայ գաղթականութիւնները մեծ մասամբ ոչնչացան առանց իրանց կրօնը փոխելու անգամ: Եւ դրա պատճառն ոչ թէ մի օտար ազգի եկեղեցուն յարիւն էր, այլ այն ընդհանուր բնական օրէնքը, որ հայ գաղթականները, արեւմուտքում հանդիպելով իրանցից աւելի բարձր կալուածական ազգերի, չը կարողացան նրանց հետ մրցութիւն անել, և կենսաբի կուրի մէջ յաղթվեցան, և կյանքից իրանցից աւելի զօրեղ ազգերից: Որի ընդհակառակն, դէպի հիւսիս և դէպի արևելք դիմող հայ գաղթականութիւնները պահպանվեցան, ոչ թէ այն պատճառով, որ չը փոխեցին իրանց կրօնը, այլ այն պատճառով, որ ապրում էին կուլտուրայով իրանցից աւելի ստոր ազգերի հետ և, գոյութեան կուրի մէջ կարողանում էին նրանց հետ մրցութիւն անել: Ուրեմն, եթէ հայերից մնացել են մի քանի փրկանքներ, դրա համար պէտք է չնորհալ կալ լինել ոչ թէ լուսաւորական եկեղեցուն, այլ թուրքերին, թաթարներին, պարսիկներին և հնդկներին: Եթէ հայը լինէր ֆրանսիացու, գերմանացու և անգլիացու հպատակ, արդէն վաղուց կորած կը լինէր և լուսաւորական եկեղեցին հազիւ թէ կարող կը լինէր փրկել նրանց:

Մենք միշտ ասել ենք և դարձեալ կը կրկնենք,

վայ ընթացքում մեծ փոփոխութիւններ չերեցան. Խորհրդով լաւ է, քունը վատ չէ, հաղը չափաւոր է. ոյժը, թէպէտ և կամաց, բայց ընդհանրապէս աւելանում է. Ջերմութեան աստիճանը երէկ երեկոյան 37,9 էր, իսկ երակի զարկը 92: Այսօր առաւօտ Ջերմութեան աստիճանը 37,9, իսկ երակի զարկը 100 է: Ստորագրեցին: Բժշկապետներ Սլշէվսկի և Բօտկին:»

ԲԵԼԳՐԱՎ, 21 դեկտեմբեր (2 յունվարի): Գարնանը, Դուռայի վրա նաւազնացութիւնը բացվելուց յետոյ, Ռուսաց շողեսաւերի և առեւտրական ընկերութիւնը բաց կանի այստեղ մի նաւահանգիստ և կը սկսի կանոնաւոր երթևեկութիւն Բելգրադի և բոլորական ուսումական նաւահանգիստների մէջ:

ՎԻԵՆԱ, 21 դեկտեմբեր (2 յունվարի): Սերբիայի անկախ վարմունքը և սերբական կառավարութեան անդիւրաթեքութիւնը, չը նայելով Վիենայի և Պէշտի ճիւղման, այստեղ ծանր տպաւորութիւն են գործում: Լուր կայ որ իբր արգելված է Սերբիայից հացի, հատիկի, ալեւրի և սիսեռի արտահանումը Աւստրիա, Վենգրիա, Բօսնիա, Հերցեգովինա և Փարիզ: Լուր է տարածված, որ իբր Կուսմանի Բօլշաքայովում ռուսաց հիւպատոս է նշանակված:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 դեկտեմբեր: «Правит. Вѣстн.» լրագիրը հրատարակել է պ. Ուրբիլին շնորհված Բարձրագոյն հրովարտակր, որի մէջ ասված է նրա նոր պաշտօնի մէջ նշանակելու մասին: Որպէս վարձատրութիւն նրա արած ծառայութիւնների համար շնորհվում է նրան Վաղդիմիր առաջին աստիճանի պատանշանը: Լօրտնով Լօնդոնում է դեսպան նշանակված, պ. Նօվիկով—Կ. Պոլսում, պ. Ուրբիլ Վիենայում և Սաբուրով Բերլինում: ԿԱՆՆ, 21 դեկտեմբեր: Վայսրուհին ամբողջ օր զոհացուցիչ կերպով անցկացրեց. հիւանդութեան սովորական նշանները չատ չափաւոր կերպով արգայայտվեցան, ոյժը լաւ:

որ ազգութեան գաղափարը պայմանաւորվում է ոչ թէ կրօնով, այլ նրա ցեղական յատկութիւններով, որոնց մէջ առաջին տեղը բռնում է լեզուն, որ է և միշտ կը լինի ազգի պահպանութեան հիմքը: Դա է, որ մշտական է, դա է, որ անբաժանելի է մարդկութիւնից: Լեզուն թէ և փոփոխվում է, բայց իր փոփոխութեան մէջ աւելի կենսաբ. է ստանում, զարգանում է և կատարելագործվում է: Մի մարդ կարող է ոչ մի եկեղեցու չը պատկանել և մինչև անգամ անկրօն լինել, բայց չէ կարող մի և իյց լեզուով չը խօսել: Խօսքը միշտ կը մնա, որքան ապրում է մարդկութիւնը. նա յաւիտենական է:

Հայը,—թէ կաթօլիկ լինէր նա, թէ բողոքական, թէ լուսաւորական և թէ անկրօն,—դարձեալ հայ է, որովհետեւ մի և նոյն ցեղական յատկութիւններն ունի, մի և նոյն լեզուով է խօսում, մի և նոյն տոհմին է պատկանում: Մենք եկեղեցու տարբերութեան մէջ ազգային տարբերութիւն չենք ճանաչում: Մենք չենք կարող ընդհանուր մարդկային կենցաղավարութեան պայմանների մէջ մեզ համար առանձին օրէնքներ ստեղծել: Չը կայ մի ազգ երկրագնդի վրա, որի մէջ չը լինէին դանազան աղանդներ, դաւանութիւններ, եկեղեցիներ, բայց բոլորը մի և նոյն ազգին են պատկանում: Ամերիկայում մինչև անգամ մի բնութանքի մէջ հայրը, մայրը, որդին, աղջիկը,—իրաքանչիւրը առանձին եկեղեցիներում են աղօթք անում, բայց կրօնի տարբերութիւնը չէ մնաւում նրանց ազգութեանը:

Լօրտն երկպառակութիւնների խնդիրը մէջ գցել ուղիղ այն ժամանակ, երբ Տաճկաստանում պատրաստվում է հայերի համար մի ապագայ,—դա երեւոյթագործութիւնից աւելի մեծ յանցանք է: Մենք այսպիսիներին ստոր ենք դասում Հասուններից, Նիկոններից, Վաթաններից և Մեհմեդականներից: Մենք յայտնում ենք մեր անկեղծ ցուրը, որ վերջին ժամանակներում Կ. Պոլսի մեր հակահաստիքան եղբայրներից մի խումբ, զանազան տիպեր հանգամանքներից ստեղծված, զիմեցին լուսաւորական եկեղեցու գիրկը: Մենք աւելի կը բորբոքենք նրանց, եթէ կաթօլիկ եկեղեցու մէջ մնալով, կը շարունակեն քարոզել հայութիւն և ազգայնութիւն: Մենք մի մեծ կորուստ ենք համարում, որ մեզ

ախորժակի և միջակ քնի օգնութեամբ աստիճանաբար կազդուրվում է. Ջերմութեան աստիճանը առաւօտը 37,8 էր, իսկ երակի զարկը 112: Ստորագրեցին բժշկապետներ Սլշէվսկի և Բօտկին:

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 22 դեկտեմբեր: Բարձրագոյն հրամայված է պետական ծառայութեան մէջ հաշուով քաղաքային պոլիցիական պաշտօնեաներին, փոխանակ քաղաքական աստիճանաւորներին յատկացրած սրբի, կրեւ պատահեաւ դրազուեան ձևի թրեր:

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐՄԵՐԻՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍ. ԳՐԱՎԱՅ. ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

- 1) Մամուլի տակ ընկաւ և 1880 թ. յունվարին լոյս կը տեսնէ՝ ՂՈՒԿԱՍԵԱՆՑԻ—ԸՆԴՀԱՆՈՐ ՎԵՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ հին դարը—ա. մի:
- 2) Շուտով մամուլի տակ կը լինի Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ աշխատասիրութեամբ և հրատարակութեամբ Մարգարայնութիւն մարդու մարմինը, նորա կենքը և խնամատարութիւնը—անուշով պատկերազարդ գիրք:
- 3) Մամուլի տակից դուրս է եկել և արդէն վաճառվում է «ՄԵՐՆԵՑԻ-ՆԵՐՈՒՆԸ» 9-դարու պատմական վէպը, որոյ գլխին աւելի տեղ մի ռուբլի է: Նոր տեղը ստացուել է Ռոստովի (պ. Տէր-ԱՐԲԱՍԵԱՆԻ) օրացոյցը, երկու պատկերներով զարդարուած. գլխին է 15 կ.:

համակրողների մի խումբ դուրս եկաւ հակառակ բանակից, որին խորամանկ Հաւմը թշնամական դիրքի մէջ է դրել իր համագործակցի գէթ. Թող ուրախանան կարճամիտները, բայց մենք ոչ որ ուրախութեամբ կցորդ չենք լինում: Մի այսպիսի ուրախութիւն զգաց հայոց ազգը այն ժամանակ, երբ չորս նշանաւոր եկեղեցականներ բաժանվեցան միմեկեւոր միաբանութիւնից և վերադարձան լուսաւորական եկեղեցու գիրկը: Սեծ եղաւ վիսաւը, որովհետեւ, միմեկեւորների միաբանութիւնը, որ այնքան շատ գործել էր հայութեան համար, որ մի լաւ թարգման էր մեր ազգի և Եւրոպայի մէջ,—այն օրից, երբ այդ չորս արժանաւոր անձինքը հեռացան,—սկսեց հետզհետեւ թուլանալ և վերջապէս դէպի հայոց ազգի շահերը անտարբեր լինել: Վաստակեցին չորս մարդիկ, բայց կորցրինք մի ամբողջ միաբանութիւն:

Եթէ այսօր կամ Էդուց կը զարկէ Տաճկաստանի հայոց վերածնունդի ժամը, եթէ Հայաստանին կը տրվի որ և իյց ինքնավարութիւն, այդ բախտին պէտք է վիճակակից լինեն Թուրքիայի բոլոր հայերը առանց կրօնի խտրութեան: Բերլինի դաշնագրի 61-րդ յօդուածի մէջ հայերին խոստացված բարեկեցութիւնը միայն լուսաւորականներին չեն պատկանում, այլ վերաբերում են և կաթօլիկ և բողոքական հայերին: Այդ իսկ պատճառով, կրօնի խնդիրները մի կողմ դրած, այժմ Թուրքիայի հայերը ազգայնութեան գրօյր պարզելով, պէտք է ձեռք ձեռքի տուած աշխատեն անօրինել իրանց ապագայ բախտը: Եւ հայութեան գործը Թուրքիայում այն ժամանակ միայն յաջողված կարելի է համարել, երբ ազգի անջատված մասերը կը միանան, կը կազմեն մի ամբողջութիւն, ոչ թէ կրօնական կապերով, այլ ազգայնական անուշով: Բաւական է, որքան հայեր իրանց ճանաչել տուին որպէս կրօնական համայնք, այսուհետեւ թող աշխատեն ճանաչվել որպէս ազգ:

3-4